Հավելված
ԱրՊՀ գիտական խորհրդի
2015 թվականի մայիսի 12-ի N8 -Լ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՓՈԽԱՏԵՂՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են ուսանողների փոխատեղման կազմակերպման ընդհանուր հիմունքները և պայմանները:

2.Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքները, ԼՂՀ կառավարության 2007թ. փետրվարի 27-ի N 81-Ն որոշումը, ԼՂՀ ԿԳ նախարարի 2012թ. փետրվարի 7-ի N 10-ն հրամանը, ԱրՊՀ կանոնադրությունը:

3. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների վրա:

II. ՓՈԽԱՏԵՂՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.Փոխատեղումը կազմակերպվում է ԼՂՀ կառավարության կողմից տվյալ ուսումնական տարվա համար տվյալ մասնագիտությանը ամրագրված ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ(անվճար) տեղերի շրջանակում՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա արդյունքներով մրցութային կարգով (ՄՈԳ-ի հաշվառմամբ):

5. Փոխատեղման գործընթացին մասնակցում են միայն նախորդ ուսումնական տարվա քննաշրջաններին մասնակցած անցողիկ միավոր ստացած և հարգելի պատճառով քննաշրջանին չմասնակցած, բայց փոխատեղման կազմակերպման ժամանակ ակադեմիական պարտքերը արդեն մարած ուսանողները:

Անհարգելի պատճառով ակադեմիական պարտքերի մարման շրջանում հայտնված և փոխատեղման կազմակերպման ժամանակ ակադեմիական պարտքերը մարած ուսանողները փոխատեղման գործընթացին կարող են մասնակցել տվյալ խմբում թափուր տեղ լինելու դեպքում միայն: ***(խմբ. 09.11.2015 N29-Լ որոշմամբ)***

6. Ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա :

7.Փոխատեղման գործընթացին չեն կարող մասնակցել երկրորդ մասնագիտություն ստացող, ինչպես նաև ակադեմիական պարտք ունեցող ուսանողները:

8. ԲՈՒՀ-ից հեռացված (ազատված), ԱրՊՀ մեկ մասնագիտությունից մեկ այլ մասնագիտություն, հեռակա ուսուցման համակարգից առկա ուսուցման համակարգ, ինչպես նաև այլ բուհերից ԱրՊՀ տեղափոխված ուսանողները փոխատեղման գործընթացին մասնակցում են առնվազն մեկ ուսումնական տարի ուսանելուց հետո:

9. Սահմանված կարգով ձևակերպված ակադեմիական արձակուրդից վերադարձած և նախկինում անվճար ուսուցման համակարգում սովորած ուսանողը վերականգնվելիս մինչև ուսումնական տարվա ավարտը պահպանում է նախկինում ունեցած անվճար սովորելու և ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

10. ***(ուժը կորցրած 24.03.2017 N11-Լ որոշմամբ)***

11. Սահմանված կարգով ակադեմիական արձակուրդում գտնվող ուսանողները ուսումնական տարվա բոլոր քննություններն ու ստուգարքները հանձնելու դեպքում իրենց միավորներով մասնակցում են փոխատեղման գործընթացին:

12.ԱրՊՀ անվճար ուսուցման համակարգ տեղափոխված միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գերազանց առաջադիմություն ունեցող շրջանավարտները ուսումնական տարվա ավարտին փոխատեղմանը մասնակցում են ընդհանուր հիմունքներով՝ տվյալ մասնագիտությանը ընդունելության արդյունքներով հատկացված տեղերի շրջանակում:

13. ***(ուժը կորցրած 24.03.2017 N11-Լ որոշմամբ)***